թուրն ու պատյանը՝ խաչաձև: Միաժամանակ արձակում էին հարսանեկան մորթած եզան արյան մեջ թաթախած և կապած հանգույցը, բացում էին կող-պեքը, պատյանի միջից հանում էին դաշույնի դանակը, արձակում էին գըր-պանի դանակի բերանը: Այս ամենը լավ սրբում էին:

Զույգը իրավունք էր ստանում առագաստ մտնելու: Անկողինը ձգում էր **ճարսնէքոիրը.** մոտը դնում էր հավ, գինի, քաղցրեղեն, մեղր: Սովորաբար կուսության ապացույցը պահանջվում էր, բայց ոչ միշտ, մանավանդ փոքրա-հասակներից: **Քավօրն ու ճարսնախպէրը** այդ գիշեր մնում էին[49]: Հենց որ իմացվում էր, որ տղան աղջկանը **տիրացէլ ա, քավօրը բըրփանգը՝** հրացանը տրաքեցնում էր, հավ էր մորթում և արյունոտած **նշանավ** ուղարկում զո-քանչին, որպես **պարզէրէս նշան:** Զոքանչն էլ մեկ-երկու հավ էր մորթում և փլավի գլխին դրած՝ ուղարկում: Կապանում իբրև ապացույց, որ աղջիկը կույս էր, առավոտյան պարանին կախում էին արյունոտ սավանը ի տես ամենքի: Սկսվում էր նոր քեֆ: Այստեղ վերջացնում էին նախորդ իրիկուն հավաքած **խօնչանէրը: Խաչախպէրն** էլ գնում էր տուն: Առագաստի մյուս օրը տղան մնում էր տանը, ոչ ոքի աչքերին չէր երևում:

Ամեն կերպ ձգտում էին հարսանիքն անցկացնել ուրախ: Այստեղ այն նախնական մտայնությունն էր հանդես գալիս, որի համաձայն սկզբնավորու-թյունով[50] պայմանավորվում էր նույնանման շարունակությունը: Ուրախ հար-սանիքը գրավական էր, որ նոր զույգի ապագան էլ կանցնի ուրախ և կյանքն՝ անփորձանք:

Նույն մտայնությունով էր թելադրված այն սովորությունը, որը շաղկապ-ված էր նորապսակ աղջկա առաջին աշխատանքային օրվա հետ նույն ընտա-նիքում: Որպեսզի հարսը միշտ լավ տանտիկնություն անող լինի, բացի բեղմ-նավորությամբ օժտված լինելուց, ունենա նաև ժիր, աչքաբաց, անխոնջ տըն-տեսուհու ունակություններ, նա իր նոր կյանքը պիտի սկսեր նույնպես ժիր աշխատանքով—վաղ վեր կենար, տունը ավլեր և աղբը մի անկյունում հավա-քեր, մուտքից հեռու: Զանգեզուրի հարսանեկան սովորությունները նկարա-գրողներից մեկը՝ Ե. Մելիք-Շահնազարյանը[51], այդ բանը բացատրում է նրա-նով, որ «նորահարսը դրանով հեռացնում էր իրանից աղքատությունն ու ճա-նապարհ էր մաքրում հարստության համար, որը պիտի տուն մտնի **մաքուր** ռոտներով»: Ավելի ճիշտ է բացատրում նույնը Գ. Ֆ. Չուրսինը[52], որպես մի **մո-գական** արարողություն, որով սկիզբ էր դրվում նման ժիր տնային աշխա-տանքներին: Հավաքած աղբի վրա հարսը դնում էր իր չմօշկը, որի մեջ սկե-սուրը ձգում էր մի քանի կոպեկ, և միայն այնուհետև հարսը հանում էր աղբը դուրս և դեն թափում:

Տնային աշխատանքների ապագա հաջողության սկիզբն էր դրվում և այն բանով, որ նորահարսը վաղ-վաղ ջուր էր տաքացնում և բոլոր տնեցիների, սկսած մեծերից մինչև ամենակրտսեր տեգրը, ոտներն էր լվանում, ամեն կերպ զգուշանալով նախ ձախը և ապա աջը լվանալուց, չլինի՞ թե դրանով սկիզբ դրած լինի ապագա ձախորդություններին:

Նոր ամուսնացածները պիտի **քառսունք**[53] պահեին: Նրանք իրավունք չու-

49 Գորիս:

50 Տե՛ս վարը՝ «Մագիկ միջոցներ» գլուխը:

51 Արծվանիկի պետական դպրոցի վարիչը: СМОМПК, вып. XIX, отд. II, էջ 223

52 Նշված աշխ., էջ 240:

53 Մեղրու բարբառով՝ **քըռա՛սսօնք:**